ՀՏԴ 82.09:329.73(479.243) Գրականագիտություն

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ

Վալյա ԱՌԱՔԵԼՅԱՆ

Բանալի բառեր՝ *Արցախյան գոյամարտ, հերոսամարտ, արցախյան ֆենոմեն, տարեգրություն, գաղափարախոս, ժամանակագիր, օրհներգ, պատմագետ:*
Ключевые слова - *Арцахская война, бой, арцахский феномен, летопись, идеолог, летописец, гимн, историк.*
Key words- *Artsakh war, heroic battle, Artsakh phenomena, annals, ideologist, chronicler, hymn, historian.*

В.Аракелян
Баграт Улубабян и освободительная борьба Арцаха

Перо Б.Улубабяна- великого эстета и историка - беспрестанно служило своему народу.

Изданные на основе богатых первоисточников научно-исторические исследования и труды внесли весомый вклад в летопись героической освободительной борьбы арцахцев.

Значительную часть литературных заслуг Б.Улубабяна составляют страстные публицистические статьи и очерки, переводы и отклики.

Мы убеждены, что его художественно-литературное и научно-историческое наследие еще найдет своих исследователей.

V.Araqelyan
Bagrat Ulubabyan and the Liberating Fight of Artsakh

B.Ulubabyan, the great esthete and historian, served to his people incessantly. Each of the great historical works and researches of the historian is the steady contribution to the chronicles of the Armenian struggle for freedom.

The considerable part of the literary merits of B. Ulubabyan consists of his urgent articles and reviews, the works of literary criticism, translations from grabar (old Armenian language) and from Russian.

We are convinced that his literary and historical heritage still will be researched.

Մեծ գեղագետ և պատմաբան Բ. Ուլուբաբյանի գրիչը անդադրում ծառայել է իր ժողովրդին:

Հիմք ընդունելով հարուստ սկզբնաղբյուրները՝ պատմական գիտական հետազոտություններն ու գիտական աշխատությունները իրենց ծանրակշիռ ներդրումն ունեցան դարավոր ազատագրական տարեգրության մեջ:

Բ. Ուլուբաբյանի գրական վաստակի մի զգալի մաս են կազմում նրա հրապարակախոսական կրքոտ հոդվածներն ու ակնարկները, գրախոսականներն ու թարգմանությունները:

Մենք համոզված ենք, որ նրա գրական-գեղարվեստական ու պատամական գիտական ժառանգությունը դեռևս կգտնի իր նոր հետազոտողներին:

Ռուս բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին այսպես է բնութագրել արցախյան ոգին. «Բնությունն ու պատմությունը Ղարաբաղում ստեղծել են վառ արտահայտված մի տիպ: Ամբողջ աշխարհով մեկ ցրված ղարաբաղցիները հեշտությամբ ճանաչելի են: Լայն թափը, անձնազոհ քաջությունը, համարձակությունը, ինքնավստահությունը, յուրատիպ համառությունը, ընտանեկան կենցաղում նահապետականությունը-ահա ղարաբաղցու այն համակրելի գծերը, որոնք համարվում են հին հայկական առաքինությունների խորացումը: Թեև պատմության դաժանությունից դրանք խամրել են, սակայն մաքուր տեսքով պահպանվել են Ղարաբաղում: Բարձրահասակ ու ամրակազմ մի ցեղ, որ գնացել է լեռները՝ կյանքը փրկելու համար, որ պնդվել է լեռնային օդում, իրեն ապահովել հարթավայրային բնակիչներին սպառնացող վարակներից: Այդ ոգու դրսևորումը նրա հերոսական պատմությունը եղավ, նրա հազարամյա

անկախ գոյությունը, որի սխրանքը պետական, ռազմական, մտավոր ու գիտական երևելի գործիչների բացառիկ առաքելությամբ է պայմանավորված»:[1]

Երևելի այդ գործիչներից էր Արցախյան գոյապայքարի ռահվիրա, գաղափարախոս ու ժամանակագիր Բագրատ Ուլուբաբյանը, որը ասպարեզ եկավ անցած դարի հիսունական թվականներին: Սրանք զարթոնքի ու արթնացման տարիներ էին արցախյան գրականության համար և ահա վերածնության այս մթնոլորտում ձևավորվեց Ուլուբաբյանի գրական անհատականությունը:

Բ. Ուլուբաբյանի երևույթը անխզելիորեն կապված է պատմական այն իրադարձությունների հետ, որ տեղի ունեցան Արցախում, անցյալ դարի վերջին տասնամյակներին: Հաստատապես սկիզբը շատ ավելի հեռվում էր՝ 60-ականների սկզբներին, բայց Խորհրդային Միության ազատականացումը, վերակառուցում-պերեստրոյկան միայն ազդարարը եղավ էթնիկական ոգու արթնացմանն ու արցախահայերի ազգային-ազատագրական պայքարի բռնկումին:

Ընդլայնվում են Ուլուբաբյանի գրական-հասարակական գործունեության շրջանակները՝ «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագիր, կուլտուրայի մարզային վարչության պետ, մարզսովետի գործկոմի նախագահի տեղակալ և այլն: Օգտվելով պաշտոնի ընձեռած հնարավորությունից՝ նա ռուսական և ադրբեջանական դպրոցներում ադրբեջաներենի փոխարեն ներգրավեց հայոց լեզվի դասաժամեր: Այդ քայլը սահմանադրական էր, ուստի Բաքվում ոչինչ չկարողացան անել, բայց անսպասելի կրճատվեց Բ.Ուլուբաբյանի հաստիքը:

Ժամանակի տագնապը խորապես վերապրում էր Ուլուբաբյանը և կատարեց գրեթե անհնարինը. գրական կապեր ստեղծեց Հայաստանի գրական կյանքի հետ մի այնպիսի ժամանակ, երբ քանդված կամ խարխլված էին Արցախը Հայաստանի հետ կապող բոլոր կամուրջները: 1957 թվականին կազմակերպեց Վազգեն Ա նորընտիր կաթողիկոսի այցը Ղարաբաղ: Մայր Հայաստանից սկսեցին ավելի շատ գրողներ, արվեստագետներ այցելել Ստեփանակերտ, (Ն.Զարյան, Հր. Քոչար, Ս.Կապուտիկյան, Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոն, Հ.Սահյան, Ս.Խանզադյան, Սարմեն, Նորենց, Հր. Հովհաննիսյան, Պ.Սևակ, Գ.Էմին և ուրիշներ), որոնք լինում էին Բ.Ուլուբաբյանի առանձնատանը, որը մի տեսակ «Վերնատուն» էր դարձել Ստեփանակերտում:

Հետևեցին աննախադեպ սպառնալիքներ Բաքվից: Բայց Բ.Ուլուբաբյանը և նրա համախոհները չընկրկեցին և տեղի չտվին: Մոսկվա հասած երկրորդ դիմումից հետո Ուլուբաբյանն ու իր ընկերները Բաքվի կողմից մեղադրվում են դաշնակցական - ահաբեկչական գործունեության մեջ:

1966թ. Երևանում հայտնվեց 150 էջանոց անստորագիր մի մեքենագիր տեքստ, որը շուտով բազմացվեց ու տարածվեց: Ձեռագիրը պատմում էր 1920 թվականից հետո Արցախի գլխին եկած արհավիրքների, Ադրբեջանի տիրապետության տակ հեծող հայության դժվարին կյանքի մասին: Դրանից շատ չանցած՝ ԽՄԿԿ Կենտկոմը Երևանից ստացել էր ձեռագրի ռուսերեն թարգմանությունը՝ մի ընդարձակ զրպարտչական վերլուծության հետ: Զրպարտագրում մատնացույց էր արված նրա՝ տեքստի հեղինակը՝ Բ. Ուլուբաբյանը: Մոսկվան ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանից և Կենտկոմի համապատասխան անդամներից քիչ ջանքեր չպահանջեց՝ ձեռագրի հեղինակին սպասվելիք պատիժներից փրկելու համար:

«Արցախում մնալն անհնարին դարձավ հատկապես այն պատճառով, որ Բաքվի իշխանություններն իրենց հայատյաց ծրագրերի իրականացման գործընթացի մեջ ներգրավել էին մի խումբ ստրկամիտ հայ պաշտոնյաների՝ Մելքումյանների, Կևորկովների և ուրիշների, որոնք իրենց գործողություններով ամեն կերպ աշխատում էին հաճոյանալ թուրքերին»,- այսպես է գրել հայտնի դեպքերի մասին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հր. Սիմոնյանը՝ Բ. Ուլուբաբյանի ծննդյան 75-ամյակի առիթով:[2]

---

[1]Բ.Ուլուբաբյան, «Ժամանակի քննությունը», «Վաչագան Բարեպաշտ» հր, 2006:

[2] «Լրաբեր հասարակական գիտություններիե, 2001, թիվ 1:

Ահա, թե ինչպես է նկարագրել այդ պատմական իրադարձությունների մասնակիցն ու վկան՝ Բոգդան Ջանյանը. «Սկզբում, ինչպես միշտ, ամեն ինչ կարծես հաջող էր գնում: Ստեղծվել էր նույնիսկ այնպիսի վիճակ, որ թվում էր շարժումը վերջապես այս անգամ հասնում էր նպատակին և ուր որ է ահա Արցախը կփրկվի թուրք ազերիների բռնապետությունից և Արցախի պատմության բոլոր ելևէջերում հնչող «միացում» կոչն ու կանչը դառնում է երջանիկ իրողություն: Բայց ամեն ինչ շուռ եկավ. հույսերից պայծառացած արցախյան մթնոլորտը հանկարծ մթագնեց, դարձավ աղետավո՞ր, ինքը՝ շարժումը մեծ աղետ դարձավ առաջին հերթին շարժման ակտիվ մասնակիցների համար: Նրանց մեկուսացրին, կալամեջ արին այն ժամանակվա Արցախի դրածո տերերը, իսկ ժողովու՞րդը … ժողովուրդը ինչ, դեռ կարգին չէր արթնացել խաբեության քնից»:[1]

Այստեղ անհրաժեշտ ենք համարում բերել այն 13 ժողովրդանվեր գործիչների անունները, ովքեր Բ. Ուլուբաբյանի ղեկավարությամբ ստորագրեցին 1965թ. հունիսի 28-ի հայտնի նամակը: Նրանց համարյա բոլորին արտաքսեցին Ղարաբաղից, որոնք և դարձան առաջին պաշտոնական վտարանդիները: Ահա նրանք. Բագրատ Ուլուբաբյան, Սերգեյ Շաքարյան, Լազար Գասպարյան, Գրիգոր Ստեփանյան, Արամ Բաբայան, Արսեն Մուքանյան, Գուրգեն Գաբրիելյան, Բոգդան Ջանյան, Միքայել Կորգանյան, Արկադի Մանուչարով, Ալբերտ Սեյրանյան, Մաքսիմ Հովհաննիսյան, Սերգեյ Գրիգորյան: Շնորհիվ նրանց՝ Արցախի ժողովուրդը շոշափելիորեն զգաց ազգային ինքնագիտակցության ուժը, որը ծնվեց Բագրատյան զանգի հզոր ղողանջից: Շարժումը, սակայն, ապրեց ու ծավալվեց արդեն հայ ժողովրդի ընդերքում, որը պիտի հասցներ 70-ականների խուլ ցնցումներին և 88–ի փետրվարին սկսված համաժողովրդական և համազգային շարժմանը: Սկսվում է հալածանքի, բացահայտ սպառնալիքի կամպանիա: Բ. Ուլուբաբյանին ոչինչ չէր մնում, քան հեռանալ իր սիրելի Արցախից և բնակություն հաստատել Երևանում:

Բանաստեղծ-լրագրող Հր. Բեգլարյանը, հետագայում վերհիշելով այս ամենը, գրել է.. «Ես հաճախ եմ մտածում, թե ուրիշ էլ ո՞վ կստեղծեր մեր գրական օջախը, եթե Բ. Ուլուբաբյանը չլիներ և ո՞վ կգրեր այն պատմական նամակը, որ դանդաղ պայթող ռումբի դեր կատարեց Արցախյան շարժման համար: Ո՞վ տքնաջան վաստակով կհանրագումարեր հայոց արևելից կողմանց երկու հազարամյա պատմությունը, ո՞վ իր ամբողջ կյանքն ու վարդապետությունը Հիսուսի պես կնվիրեր Հայր - Աստծուն՝ Արցախ-Ղարաբաղին»:[2]

1968թ. Երևան տեղափոխվելուց հետո սկսվում է Բ. Ուլուբաբյանի ստեղծագործական կյանքի երկրորդ շրջանը:

Այստեղ նա գեղարվեստական գրականությանը զուգակցեց պատմագիտական հետազոտությունը, որը դարձավ նրա մտավոր գործունեության հիմնական ուղղությունը:

Պետք է նշել, որ նրան գրականությունից դեպի պատմություն տանող դրդապատճառը արցախյան ֆենոմենի բացահայտումն էր:

Բ. Ուլուբաբյանը վաղ հասկացավ, որ այն, ինչ ադրբեջանցի պատմաբանները երկչոտությամբ ասում էին 50-ական թվականներին, 60-70-ականներին արդեն դարձրել էին ազգային քաղաքական ծրագիր՝ սեփականելու Արցախի հոգևոր և նյութական մշակույթը: Դա դավադիր ու հակագիտական մի ծրագիր էր, որի դեմ հնարավոր չէր հանդես գալ բացահայտ քննադատությամբ:

Խորհրդային յոթանասուն տարիների ընթացքում ամեն կերպ արգելվում էին հայ պատմաբանների փորձերը՝ զբաղվելու Խորհրդային Հայաստանի տարածքից դուրս գտնվող պատմական Հայաստանի անցյալի, նրա ներկա իրավիճակի սոցիալ–տնտեսական, ժողովրդագրական, մշակութային ժառանգության, այնտեղ բնակվող հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող բազում այլ հարցերի լուսաբանմամբ: Դրան հակառակ՝ Ադրբեջանում «պատմաշինարարների» համար ստեղծվել էր չափազանց արտոնյալ

[1] «Հայաստան», 1995թ. 9 դեկտեմբերի:

[2] «Արարատ», Բեյրութ, 1995, 17 հունիսի:

իրավիճակ: Հաշվի չնստելով պատմական փաստերի ու իրողությունների հետ՝ կեղծելով ու եղծելով պատմությունը, իրենց ցանկություններին համապատասխանեցնելու ճանապարհով հորինվեց մի մտացածին վարկած, ըստ որի Մեծ Հայքի մաս կազմող Արցախը, Ուտիքը, Նախիջևանը և Խորհրդային Հայաստանի տարածքի զգալի մասը պատմականորեն «աթաղան - բաբաղան» Ադրբեջանի բաղկացուցիչ մասն են:

1969թ. Ուլուբաբյանը «Արցախի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 10 – րդ դարը» գիտական թեզի համար արժանացավ պատմական գիտությունների թեկնածուի աստիճանի: Ընդամենը մի քանի տարի անց՝ 1973թ. Բ. Ուլուբաբյանը արդեն պաշտպանեց դոկտորական թեզ և ստացավ պատմական գիտությունների դոկտորի աստիճան: Այդ աստիճանին նա հասավ կրկին հայրենի Արցախի պատմության հետազոտման համար՝ («Խաչենի իշխանությունը 10 – 16–րդ դարերում»):

Պատմագիտական իր ուսումնասիրություններով Բ. Ուլուբաբյանը հասավ լայն ճանաչման, հաստատեց իր կայուն տեղը հայ պատմագիրների ժամանակակից փաղանգում:

Հենվելով պատմական արխիվային փաստաթղթերի վրա՝ գիտնականը մերկացնում է թուրք պատմագրության ու պատմաբանների կեղծիքները՝ ցույց տալով, որ արցախցին՝ իր տոհմիկ էությամբ, ամենևին էլ եկվոր չէ ու երբեք չի ապավինել թուրք-ազերիների «գթասիրտ ողորմությանը»: Նա իր բնիկ օրրանում է, իր պապերի ու նախապապերի հողի վրա, նրանց փորձով հարուստ, պատմական մաքառումներով զինավառ:

Բ. Ուլուբաբյանի գործունեությունն ու գիտական ուսումնասիրությունները, նրա բանավեճերը, հրապարակախոսական կրակոտ ելույթները ուսուցողական հզոր լիցքեր են տվել արցախյան մեծ ազատամարտի նախապատրաստության ու պայքարի մարտիկներին:

1975թ. Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Հ. Ալիևի պահանջով ԲԱՀ – ը (բարձրագույն ատեստացիոն հանձնաժողով) Բ. Ուլուբաբյանին պարտադրեց երկրորդ անգամ Մոսկվայում պաշտպանել դոկտորական թեզը: Այդ ժամանակ նույնիսկ չէր օգտագործվում «վերապաշտպանություն» արտահայտությունը: Ալիևը պնդեց, որ վերապաշտպանությանը մասնակցեն ադրբեջանցի գիտնականները: Զորի Բալայանը այդ կապակցությամբ գրել է. «Ես երջանկություն եմ ունեցել այդ օրը Մոսկվայում գտնվել Բագրատի կողքին: Դահլիճում հաճախ ծիծաղն էր պայթում, կարծես խոսքը գնում էր ոչ թե պատմության ձանձրալի էջերի, այլ Արկադի Ռայկինի ռեպրիզների մասին: Դահլիճն այնպես բուռն ու հեգնորեն էր արձագանքում բաքվեցի փորձագետների ռեպլիկներին, որ նախագահողը հաճախ ստիպված էր լինում ցուցափայտով խփել ջրամանին: Բագրատի տրամադրությունը շատ բարձր էր, բոլոր հարցերին պատասխանում էր աշխուժորեն և նույնիսկ սրամտելով»:[1] Ուլուբաբյանը փայլուն հաղթանակ տարավ և վերապաշտպանեց դոկտորական թեզը:

Հետագա տարիներին «Կանթեղ» (1977), «Ոսկե շղթա» (1979), «Դրվագներ հայոց Արևելից կողմանց պատմության» (5-7-րդ դար, 1981), «Գանձասար» (1981) և այլ աշխատություններում Ուլուբաբյանը աղբյուրագիտական և ստուգաբանական նոր բանալիներ է տալիս՝ մեկնելու հայ – ռուսական առնչությունները, մեր պատմության անհայտ կամ վիճելի, Աղվանքի պատմության բազում հետաքրքիր խնդիրներ:

Պատմագետը ստեղծում է մնայուն ու բարձրարժեք գործեր, ինչպես՝ «Արցախի պատմությունը», «Արցախի գոյամարտը» (1918–1988թ. փետրվար ժամանակաշրջանի ընդգրկմամբ), «Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը», կոթողային աշխատությունները, 1918-ի մայիսյան դյուցազնամարտի հերոսական դրվագների վառ նկարագրությամբ առլեցուն «Սարդարապատ» պատմական վեպը, բազում պատմա-հրապարակախոսական հոդվածներ:

Սրանք բոլորը գիտնականի համառ պրպտումների ու խորասուզումների արգասիք են՝ աղբյուրագիտական, փաստագրական հարուստ նյութերի հենքի վրա: Նա մեծ նվիրվածությամբ ու եռանդով վիպագրեց Արցախի պատմության նորօրյա հերոսամարտը:

[1] «Ավանգարդ», 1995, 30 նոյեմբերի, թիվ 24:

Դրա վառ ապացույցն է «Արցախյան գոյամարտի տարեգրությունը» ծավալուն գիրքը, որը հայությանն ու գալիք դարերին ընծայաբերած մի խորախորհուրդ լուսամատյան է՝ տագնապոտ ու սթափեցնող: Մենք գործ ունենք մեր օրերի եղիշեական տարերգրության հետ, որի հեղինակն արցախյան պայքարի փոթորկված տարիների ոչ միայն ականատեսն էր, այլև անձնուրաց տարեգիրը:

Գուցե թե հենց հիմա է անհրաժեշտ նշել, որ ղարաբաղյան սխրանքի ճանապարհին Բ. Ուլուբաբյանը մաշել էր իր առաջին սիրտը և ճակատագիրը պարտավոր էր պարգևել նրան երկրորդը, ինչպես տարիներ առաջ այդ նույն գոյապայքարի քառուղիներում մեծահոգաբար երկրորդը պարգևեց մյուս անձնուրաց ղարաբաղցուն՝ Զորի Բալայանին. Այդպիսի տարեգրությունները երկսիրտ տաղանդների կարիք են զգում:

850 էջանոց այս տարեգրությունը ներկայացնում է Արցախյան վեցամյա հերոսամարտի նոր շրջանը (1988-1994թթ.): Այդ առիթով հեղինակը գրել է. «88-ի փետրվարն սկսվել է 1918թ. մայիսից, երբ Անդրկովկասի արևելյան մասում ստեղծվեց մինչ այդ երբեք գոյություն չունեցած Ադրբեջան, և սա էլ իր նպատակը դարձրեց տիրանալ Արցախ-Ղարաբաղ հայկական մարզին: Արցախը ոտքի ելավ, նետվեց գոյապայքարի, որը շարունակվեց տասնամյակներ, մինչև 1988-ի փետրվարը: Այս կետում արդեն այն պայթեց՝ իբրև համազգային վՃիռ, որը չէր կարող չպսակվել հաղթանակով»[1]:

Իրոք, 1988-ի փետրվարի 20-ի ընդվզումը դարձավ այն համազգային հնոցը, որ արդար պայքարի լիցքերով պարուրեց հարյուր – հազարավոր հայորդիների՝ փոքրերից մինչև ծերերը: Հասարակության գրեթե բոլոր շերտերը և՝ Արցախում, և՝ մայր Հայաստանում, և՝ սփյուռքում ոտքի ելան՝ հանուն Արցախի փրկության և՝ ազատագրության, հանուն ժողովրդավարության:

Արցախի պատմությունը՝ սերտորեն միահյուսված հայոց պատմությանը, առաջին անգամ ամբողջացրեց և հայ պատմագիտական համակարգի մեջ դրեց Բ. Ուլուբաբյանը:

Գիտնականը զբաղվել է նաև թարգմանչական աշխատանքով: Գրաբարից նա գրական աշխարհաբարի է թարգմանել ու հրատարակել հայ հոգևոր մշակույթի գանձարանում բացառիկ տեղ գրավող մի քանի դասական երկեր, մասնավորապես՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» (2000), Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունը» և «Թուղթ Վահան Մամիկոնյանին» աշխատությունը (1982), Եսայի կաթողիկոս Հասան – Ջալալյանցի «Համառոտ պատմություն Աղվանից երկրի» գործը (1997), որոնք բոլորն էլ լույս են տեսել թարգմանչի ընդարձակ առաջաբաններով, որոնցից ամեն մեկը առանձին քննախույզ հետազոտություն է՝ հանգամանալից ծանոթագրություններով:

Բ. Ուլուբաբյանը նաև կատարել է գեղարվեստական մի շարք ստեղծագործությունների թարգմանություններ՝ ռուսերենից հայերեն, մասնավորապես՝ Չինգիզ Այթմատովի «Մնաս բարով, Գյուլսարի» վիպակը (1968) և Յուրի Բոնդարևի «Տաք ձյունը» վեպը (1972):

Բ. Ուլուբաբյանի մի շարք ստեղծագործություններ թարգմանվել են նախկին ԽՍՀՄ տարբեր լեզուներով:

Բ. Ուլուբաբյանի ստեղծագործությունները ժամանակին արժանացել են գրաքննադատների ուշադրությանը: Նրա գեղարվեստական երկերը լույս ընծայվելուն պես դիտարկվել և գնահատվել են ամսագրերում, հանդեսներում, թերթերում, գրականագիտական առանձին ժողովածուներում: Այս առումով կարևոր է նշել ակադեմիկոսներ Ս.Արզումանյանի, Ս.Աբրահամյանի, Ս.Երեմյանի, գրականագետներ Ժ.Անդրյանի, Գ. Անտոնյանի, Կ.Դավթյանի, Գ.Հովսեփյանի և այլոց հոդվածները: Բ. Ուլուբաբյանին է նվիրված Հր. Բեգլարյանի «Ղարաբաղցին» բանաստեղծությունը, որը երգի վերածվելով դարձել է յուրօրինակ օրհներգ արտերկրում և Արցախում ապրող յուրաքանչյուր արցախցու համար:

Այսպիսով, իր ստեղծագործական հարուստ ժառանգությամբ Բ. Ուլուբաբյանը ընդլայնում է Արցախի մտավոր որոնումների հորիզոնը, նաև՝ պահում արցախյան մի տոհմիկ ու յուրօրինակ երանգ հայ մշակութային տարեգրության մեջ:

[1] «Երկիր», 2000, 9 դեկտեմբերի:

Գրականություն

1. Ուլուբաբյան Բ., «Զրուցարան», գիրք Ա, «Արևիկ», 1987:
2. Ուլուբաբյան Բ., «Զրուցարան», գիրք Բ, «Արևիկ», 1988:
3. Ուլուբաբյան Բ., «Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը», «Մ.Վարդանյան» 1988:
4. Ուլուբաբյան Բ., «Արցախյան գոյապայքարը», «Գիրգրոց», 1994:
5. Ուլուբաբյան Բ., «Արցախյան գոյապայքարի տարեգրությունը», «Երևան», 1997:
6. Ուլուբաբյան Բ., «Ժամանակի քննությունը», Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հր., 2006:
7. Դալլաքյան Ռ., «Դարավոր գոյապայքարի հերոսական տարեգրությունը», «Ազգ», 9 դեկտեմբերի, 1995:
8. Կարապետյան Բ., «Բ.Ուլուբաբյան. Լեռյի գործի շարունակողը», «Եթեր», թիվ 48, էջ 4, 2001:
9. Ջանյան Բ., «Միշտ կանգնած մնալով արցախյան հողի վրա», «Հայաստան», 9 դեկտեմբերի, 1995:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Վալյա Առաքելյան - բ.գ.թ., ավագ դասախոս, ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոն

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը: